

Տ Ա Ր Ե Փ Ա Կ Ի Հ Ա Ն Գ Ի Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Գ Ս . Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ձ Ա Ց Ե Ր Կ Ր . Վ Ա Ր Թ Ա Ր Ա Ն Ի

Ա . — Տարեկան Գաւսահանդէս

10 Մայիս, կիրակի կէսօրէ եաք ժամը 3.30ին, նախկին ժառնգ. վարժարանի Մարզագաւառը փակթացած էր ծնողներու և նետաքրքրներու բազմութիւն մը, հանգիստտես ըլլալու վարժարանի ֆիզիքական կրթանքին պատկուժը եղող Տարեկան Գաւսահանդէսին, որ սալոբարտը տեղի կ'ունենայ Մայիսի երկրորդ կիրակիին:

Երկուական մրցօրդ խումբերու բաժնուած վարժարանի երկուսու մարզիկները գարնանային մեղմ ու խիստ հաճելի օդով մօտ երկու ժամեր յաջողեցան ներկաներուն լարուած ուշադրութիւնը իրենց վրայ պահել, յաջողապէս գործադրելով մարզանքէ, վազքերէ, զուարճախաղերէ — սրնցմէ երկուքը նորութիւն էին —, դրօշարշաւէ և պարանաձգութիւնէ բաղկացած ըստ բաւականին ճոյս յայտագիր մը:

Հանդէսին կը նախագահէր վարժարանի Տեսուչը Գեորգ Տ. Կիւրեղ Եպս., որ օջայտագրի ոււարտին յաջող մարզիկները պարգևատրեց բաժակներով ու մեծախնով:

Բ . — Ամալերջի Հանդէս Մանկապարտէսի

31 Մայիս, կէսօրէ եաք ժամը 3.30ին, ժամանակէն առաջ գրեթէ ամբողջութեամբ լցեցուած Հայ Երիտասարդաց Միութեան ընդարձակ սրահին մէջ կայացած այս Հանդէսը խիստ հետաքրքրական էր այս տարի: Ենթարակի Մանկավարժուհիները

յախան աչքառու նպաստ մըն է, ինչպէս նաև կարելիութիւնը կու տայ մեզի ամէն տարի ուսուցիչ մը զրկելու Հայրենիք, հոն ամիս մը շարունակ հետեւելու համար մանկավարժական դասընթացներու: Տակաւին ամէն տարի մեր աշակերտներէն 2 հոգիներու առիթը կու տան իրենց ամառնային արձակուրդը անցընելու Հայրենիքին մէջ:

Ենթարակալութիւններ՝ «Հայց. Եկեղեցի», «Նոր Օր», «Ասպարէզ» և «Շարժում» թերթերու լամբարտութեանց, սրնք տարիներէ ի վեր իրենց թերթերը ձրիտարբ կը արամադրեն վարժարանին:

Ենթարակալութիւններ Տիար Պատրիկ Այնպեանին, Տիար Անդրէաս Ծաֆէրեանին, Հոգչ. Տ. Հայկազուն Վրդ. Մելքոնեանին, Արժ. Տ. Վարդան Քոյ. Գոսպարեանին, Արժ. Տ. Բարի Քոյ. Մէթեանին և Արժ. Տ. Եանէ Աւ. Քոյ. Սէմէրեանին, որոնցմէ իւրաքանչիւրը իր բնական ջաղաքէն գամազան կրթուէր հայրդիներէ նուիրատուութիւններ ապահովելով, նեցուկ կը կանգնի մեր կըրթական հասաստութեան:

Մեր տարեկան տեղեկագիրը կը փակենք մեր երախտագիտութեան ամենէն սրտագին արտայայտութիւնները բերելով Ձերդ Բարձր Սրբազնութեան, Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր. որ իբրև գերագոյն պետը Հայկական Երուսաղէմին, Ձեր հայրական հողածութեան և խնամքին առարկան ըրած էք Ս. Թարգմանչաց Երկ. վարժարանը, իբրև անոր գերագոյն սեռուէն ու առաջնորդը, և մենք Ձեր հայրական սրտին դռները միշտ բաց գտանք մեր առջև, ամէն անգամ որ որեւէ կարիքի համար պէտք ունեցանք Ձեր հայրական լավակցութեան և քաջալերութեան: . .

Կ'աղօթենք այն բոլոր բարի և աջնիւ հոգիներուն համար, սրնք Ս. Թարգմանչաց Երկ. վարժարանի հոգեկան և մտաւոր լոյսի այս հաստատութեան գործակիցները, բարերարներն ու գործակատարները եղան, և բոլորին կը հայցենք Թարգմանիչ Հայրերու օրնութիւնը:

Պարին անհամանքով
և եղբայրական սիրով
Կիւրեղ ԵՊՍ. ԳԱՐԻԿԵԱՆ
Տեսուչ Ս. Թ. Երկ. վարժարանի

— Թիւսվ երեք — ոչինչ խնայած էին ընելու համար արտասանութիւնները, որա մախսուութիւնները, մարզանքներն ու հայկական պարերը կարելիութեան սահմանին մէջ գրուել ու անթերի:

Հանդէսին կը նախագահէր Վարժարանին Տեսուչը՝ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. որ, Ծաղիկ դասարանի 13 երկսեռ շրջանաւարտներուն երգած «Միաս Բարով, Մանկապարտէջ» երգէն հաջ րածենց անոնց վկայականներն ու «Պանպոսնիչ»-ով փակեց հանդէսը:

Գ. — Ամալեղջի Հանդէս Երկրորդական Բաժնի

7 Յունիս, Կիրակի երեկոյեան ժամը 6.30-8.30 Վարժարանի սրահին մէջ կա- յացած այս Հանդէսը վերջին ձեռնարկն էր 1980-1981 դպրոցական տարեշրջանին:

Սրահը գրեթէ ամբողջութեամբ լիքն էր ծնողներու և հրաւիրեալներու կոկիկ բազմութեամբ, երբ սրահ մուտք գործեց Միարանութիւնը, զլիսաւորութեամբ Լուսաւարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գաղանճեանի:

Հանդէսի առաջին ժասը կը կազմէր գեղարուեստական բաժինը: «Նմանեալ Մովսէսին» Թարգմանչաց շարականի երգեցողութենէն և Ընթացաւարտ սանուհիի մը կողմէ կատարուած բացման խօսքէն հաջ, յայտագրի վրայ տեղ գրուած էին զոյգ տաննախօսութիւններ (մին՝ Գլխորի համալսարանին և միւսը՝ վերջերս վախճանած Ամերիկանայ գրագէտ Ուիլյեմ Սարոյեանի մասին), խմբական արտասանութիւններ և հայրենական գողարիկ երգերու փունջ մը, կատարուած բարձրագոյն կարգերու աչակերտութեան կողմէ և ղեկավարութեամբ Տիար Սահակ Գալայճեանի:

Հանդէսի երկրորդ բաժնի սկիզբը, Տեսուչ Տ. Կիւրեղ Եպս. հասուածներ կար- դաց Վարժարանի Տարեկան Տեղեկագրէն (որ կ'երևի Սիւնի այս թիւով), որմէ հաջ կատարուեցաւ մրցանակներու և վկայականներու բաշխում: 11 երկսեռ շրջանաւարտ- ներէն (որոնցմէ մին Յոյն պարմանուհի մը) մին կարգաց զգայուն ուղերձ մը: «Հրա- տեշտի Երգչէն» հաջ, Լուսարարապետ Սրբազանը ըրաւ փակման խօսքը, քաջալիբա- կան արտայայտութիւններ ընելով ձեռք բերուած արդիւնքին համար: Եորդօրեց ընթացաւարտները որ միշտ առաջնորդուին Թարգմանչաց ոգիով և օրինակով: Ս. Աթոռոյ օրհներգը փակեց յոյժ տպուորիչ այս հանդէսը:



13 Մայիս 1981ին, Ս. Պապին վրայ եղած մահափորձի զազրիլի դէպքին առթիւ, հետեւեալ հեռագիրները փոխանակուած են.

Պետական Քարտուղարութիւն — Վատիկան Երուսաղէմ, 14 Մայիս 1981

Սրբազան զգացուած ենք Սրբազան Քահանայապետին վրայ գործողութեամբ մահափորձին ամարդի արարքին համար: Կը մաղթենք չուտափոյթ ապօքինում:

ԵՂՆԵ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Ամեն. Տ. Նշիչէ Արքեպս. Տէրտէրեան, Վատիկան, 20 Մայիս 1981
Պատրիարք Հայոց — Երուսաղէմ

Ն. Սրբութիւնը իր շնորհակալութիւնը կը չայտնէ Ձեր ցաւակցական և բա- բեժազթական հեռագրին համար:

ԿԱՐՏԻՆԱԿ ԲԱՅԱՐՈՒԼԻ
Քարտուղար Վատիկանի